

ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2017



ԻՐԱԶԵԿ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ
ՄԻԱՎՈՐՈՒՄ



ՄԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Մեր առաքելությունն է բարձրացնել հանրության տեղեկացվածության մակարդակը պետական և հանրային նշանակություն ունեցող ոլորտներում, ինչը, մեր համոզմամբ, ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնական և անբաժանելի բաղադրիչն է:

Մենք միջոցներ ենք ձեռնարկում Հայաստանում լրագրողական դաշտի ունակությունների բարելավման համար: Ավելին, մենք ևս իրականացնում ենք լրատվական գործունեություն՝ *sut.am* ապատեղեկատվության դեմ պայքարող (ֆակտ-չեքինգ) և *armrus.info* ռուսալեզու լրատվական կայքերի միջոցով:

«Իրազեկ քաղաքացիների միավորումը», իր գործընկերների հետ միասին, պայքարում է Հայաստանում ընտրությունների որակի բարձրացման համար՝ թե՛ քվեարկության օրը դիտորդություն իրականացնելով և թե՛ դրան նախորդող գործընթացների վրա ազդեցության միջոցով:

Բոլոր տեսակի նյութերը նախապատրաստելիս մենք առաջնորդվում ենք ժողովրդավարական արժեքների առաջնության սկզբունքով: Որևէ պարագայում մենք չենք արդարացնում ագրեսիվ պատերազմները, մարդու իրավունքների ոտնահարումները, ինչպես նաև մարդկության կամ բնության դեմ հանցագործությունները:

Մենք չենք ներկայացնում որևէ քաղաքական կուսակցության կամ այլ խմբի շահեր:

«Իրազեկ քաղաքացիների միավորման» աշխատակազմը, իր ստորաբաժանումներով հանդերձ, ստանձնել է մի շարք հանրային պարտավորություններ, որոնք պարտադիր չեն Հայաստանի օրենսդրությամբ: Մասնավորապես, մենք ունենք բնապահպանական քաղաքականություն, որի նպատակը վնասակար արտանետումների նվազեցումն է՝ կազմակերպության գործունեության ընթացքում էլեկտրաէներգիայի, ինչպես նաև թղթի սպառման նվազեցմամբ: Մենք նաև մեր միջոցառումներն իրականացնում ենք և մեր գրասենյակները վարձակալում ենք անվասայալակներով անձանց տեղաշարժմանը հարմարեցված շինություններում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Անձնակազմ

Գործընկերներ և կոալիցիաներ

Գործունեության շրջանակներ

Մամուլը մեր մասին

Ֆինանսավորում

ԱՆՁՆԱԿԱԶՄ



**Դանիել
Իսահանիսյան**
*Ծրագրերի
համակարգող*



Տաթևիկ Քերոբյան
Նախագահ



Աշխեն Մուշեղյան
Գործադիր տնօրեն



**Փիրուզա
Պետրոսյան**
*Գրասենյակի
օգնական*



Վահե Ղուկասյան
Խմբագիր



Արեն Մելիքյան
Լրագրող



**Արթուր
Հարությունյան**
Լրագրող




**Ռաֆայել
Աֆրիկյան**
Լրագրող



Ամալյա Մելքոնյան
Իրավաբան



Էդգար Հակոբյան
Իրավաբան



**Շուշան
Հարությունյան**
Թարգմանիչ



**Քրիստինե
Գորոյան**
Թարգմանիչ



Արենիկ Սիմոնյան
Թարգմանիչ



Զատա Պողոսյան
Թարգմանիչ



**Աննա
Փամբուխյան**
*Մոնիտորինգի
ծրագրի
համակարգող*



Սոնա Ղազարյան
*Մեդիա
մոնիտորինգի
մասնագետ*



**Գևորգ
Ղափրամանյան**
*Մոցիալական
մեդիա օգնական*



**Վահրամ
Թոքմաջյան**
Պատմաբան



**Անդրանիկ
Մանուկյան**
Տնտեսագետ



**Շուշաննա
Վրացյան**
*Մոցիալական
մեդիայի մենեջեր*




**Քրիստինե
Ավետիսյան**
Թարգմանիչ

ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ



Մենք անդամակցում ենք ԵՄ Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորումին, որի Հայաստանի ազգային պլատֆորմին անդամակցում են 200-ից ավել կազմակերպություններ: Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորումի նպատակը Արևելյան գործընկերության երկրներում քաղաքացիական հասարակության հզորացումն է, ինչպես նաև ԵՄ-ի և գործընկեր երկրների քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջև փորձի փոխանակում ապահովելը:

«Իրազեկ քաղաքացիների միավորումն» անդամակցում է «Անկախ դիտորդ» հասարակական դաշինքին, որի սահմաններում իրականացնում ենք ընտրությունների դիտորդություն: «Անկախ դիտորդի» անդամ են նաև Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը, Մարտունու կանանց համայնքային խորհուրդը և Գորիսի մամուլի ակումբը:



ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐ

- Հետազոտություն և վերլուծություն
- Տեսանյութերի հրապարակում
- Լրագրողների ուսուցում
- Ընտրական օրենսդրության առաջմղում

- Ընտրողների կրթում
- Ընտրությունների դիտորդություն
- Հանրային քննարկումներ
- Փաստերի ստուգում՝ sut.am կայքով
- Ռուսալեզու լրատվական կայք՝ armrus.info

Հետազոտություն և վերլուծություն

Մեր թիմի կողմից տարվա ընթացքում իրականացված հետազոտությունների հիմնական թեմաներն են՝

- Հայ-ռուսական սպառազինման գործարքներին առնչվող հարցերը
- Հայաստանում մարդու իրավունքների խախտումները
- Հայաստանում ժողովրդավարության մակարդակի անկումը
- Պրոկրեմյան և այլ քարոզչամեքենաները Հայաստանում
- Հայաստանի անդամակցությունը Եվրասիական տնտեսական միությանը
- Արտաքին առևտուրը և դրա վրա ազդող գործոնները
- Էներգետիկ ենթակառուցվածքը. Էլեկտրաէներգիայի և բնական գազի ազդեցությունը քաղաքականության վրա
- Հայաստանի իշխանությունների ստացած արտերկրյա գրանտերը
- Ղարաբաղյան հակամարտությունը
- Հայ-իրանական հարաբերությունները
- ԵՄ-Հայաստան հարաբերությունները
- Ռուսական ուժային կառույցների գործունեությունը Հայաստանում

- Քաղաքացիների անձնական տվյալների պաշտպանությունը Հայաստանում
- Հավաքների ազատությունը Հայաստանում
- Քաղաքական դիսկուրսը Հայաստանում
- Ոստիկանության գործունեությունը որոշ առանձին ոլորտներում
- Ընտրությունների վերաբերյալ հանրային ընկալումները Հայաստանում
- Ընտրական հանձնաժողովների գործունեությունը
- Հայաստանի արտաքին քաղաքականության պատմությունը
- Կոռուպցիոն ռիսկերի բացահայտում և դրանց հակազդման միջոցներ
- Ընտրական և քաղաքական կոռուցիայի բացահայտում

Տարվա ընթացքում մենք իրականացրել ենք հետազոտություններ, որոնց արդյունքում հրապարակել ենք ավելի քան 100 հոդված: Այս հոդվածները հրապարակվել կամ հիշատակվել են այլ առցանց լրատվամիջոցներում առնվազն 2500 անգամ:

Տեսանյութերի հրապարակում

Մեր փորձագետների կողմից իրականացված ամենակարևոր հետազոտությունների հիման վրա ստեղծվում են տեսանյութեր: Մենք նաև հրապարակել ենք քաղաքացիների իրավունքների մասին կրթող տեսանյութեր և սոցիալական գովազդներ: 2017 թվականի ընթացքում ստեղծվել և հրապարակվել է 37 տեսանյութ:



Մեր տեսանյութերը YouTube սոցիալական ցանցում ունեցել են շուրջ 500 հազար դիտում և լրացուցիչ 2 մլն. դիտում՝ Facebook-ում և այլ սոցիալական ցանցերում: Միայն YouTube-ում տեսանյութերը դիտվել են 1,1 մլն. րոպե:

Լրագրողների ուսուցում

2017 թվականի ընթացքում մենք կազմակերպել ենք «Արտաքին քաղաքականություն և լուսաբանում» թեմայով երկու սեմինար-կոնֆերանս՝ Ծաղկաձորում: Միջոցառումները մասնակցել է ընդհանուր առմամբ քառասունյոթ լրագրող՝ հայաստանյան առաջատար լրատվամիջոցներից:

Սեմինարների ընթացքում «Off the Record» ֆորմատով ելույթ են ունեցել և մասնակիցների հարցերին պատասխանել Հայաստանում ԱՄՆ Արտակարգ և լիազոր դեսպան Ն.Գ. պարոն Ռիչարդ Մ. Միլլս կրտսերը, Արտակարգ և լիազոր դեսպան, Հայաստանում Եվրոպական Միության պատվիրակության ղեկավար Ն.Գ. Պյոտր Անտոնի Սվիտալսկին, Հայաստանում Լեհաստանի Հանրապետության Արտակարգ և լիազոր դեսպան Եժի Մարեկ Նովակովսկին, ՀՀ Արտաքին գործերի նախարարության Եվրոպայի վարչության ներկայացուցիչ Արա Մարգարյանը, Երևանի մամուլի ակումբի նախագահ Բորիս Նավասարդյանը, Միջազգային և անվտանգության հարցերի հայկական ինստիտուտի նախագահ Ստյոպա Սաֆարյանը և այլ փորձագետներ:

Մենք նաև կազմակերպել ենք «Փաստերի ստուգման լրագրության» աշնանային դպրոց Ծաղկաձորում: Դպրոցում դասախոսությամբ հանդես են եկել մեդիա ոլորտի առաջատար մասնագետներ Հայաստանից և արտերկրից, մասնավորապես՝ Ալեքսեյ Նաբոժնյակը ուկրաինական StopFake լրատվականից, Տարաս Իլկիվն «Ինտերնյուս-Ուկրաինայից», տնտեսագետ, «Հանրային քաղաքականության հետազոտման ազգային կենտրոն» ՀԿ նախագահ Արտակ Մանուկյանը, «Հետք»-ի հետաքննող լրագրող Հրանտ Գալստյանը: Միջոցառումը նպատակ ուներ զարգացնել ինչպես փորձառու, այնպես էլ սկսնակ լրագրողների և ուսանողների մասնագիտական հմտությունները Fact Checking լրագրության ոլորտում:

Ընտրական օրենսդրության առաջնություն

2017 թվականի սկզբից Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, ոստիկանությունը և գործադիր իշխանության այլ ճյուղեր նախապատրաստվում էին ընտրություններին: Այդ փուլում մեզ հաջողվեց առաջ մղել 12 ենթաօրենսդրական կարգավորում, որոնք բխում էին ժողովրդավարական ընտրությունների նպատակից և նվազեցնում էին ընտրական կոռուպցիայի ռիսկերը:

Առաջնության գործընթացի շրջանականերում մենք մասնակցել ենք ԱԺ-ում 4+4+4 բանակցային ձևաչափին և իրականացրել առաջնությանն ուղղված այլ գործողություններ: Մենք նաև բարձրացրել ենք մի շարք ՔՀԿ-ների պահանջները Կենտրոնական ընտրական հանձնաժողովում և Ոստիկանությունում:

Ընտրողների կրթում

2017 թվականի խորհրդարանական և Երևանի ավագանու ընտրությունների նկատմամբ հանրային վերաբերմունքը լրջացնելու և գիտելիքները բարձրացնելու նպատակով հրապարակել ենք 12 տեսանյութ: Այդ տեսանյութերը, բացի սոցիալական ցանցերում շուրջ 207 հազար դիտում ունենալուց, հեռարձակվել են նաև հեռուստատեսությունների և ռադիոյի միջոցով, մասնավորապես, 359 անգամ՝ հեռուստատեսությամբ և 180 անգամ՝ ռադիոյով:


Ընտրությունների դիտորդություն

2017թ. ապրիլի 2-ին Հայաստանում տեղի ունեցած խորհրդարանական և Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ մենք իրականացրել ենք երկարաժամկետ և կարճաժամկետ դիտորդական առաքելություն՝ «Անկախ դիտորդ» դաշինքի շրջանակում: Դաշինքի մեր գործընկերն է Հելսինկյան



քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը:

Խորհրդարանական ընտրությունների ժամանակ, մեր գործընկերների հետ համատեղ, ունեցել ենք 450 կարճաժամկետ և 34 երկարաժամկետ դիտորդ, իսկ Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ՝ 140 կարճաժամկետ դիտորդ:



Բացի այդ, մենք հավատարմագրել ենք European Platform for Democratic Elections-ի դիտորդներին, որոնց հետ ունեինք համատեղ շրջիկ դիտորդական խմբեր:

Ընտրությունների դիտորդության արդյունքներով հրապարակվել են զեկույցներ:

Հանրային քննարկումներ

2017 թվականին «Իրազեկ քաղաքացիների միավորումը» կազմակերպել է հանրային քննարկում՝ կապված Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի անդամակցության հետ: Քննարկմանը մասնակցել են Ազգային ժողովի 4 խմբակցություններից 3-ի ներկայացուցիչներ, այդ թվում՝ խորհրդարանի փոխխոսնակը: Քննարկմանը մասնակցել են մոտ 90 փորձագետներ ու երիտասարդներ, ինչպես նաև տասնյակից ավել լրագրողներ:

Բացի այդ, կազմակերպության ներկայացուցիչները ելույթներ են ունեցել արտաքին



քաղաքականության մասին խորհրդարանական տարբեր քննարկումների ժամանակ: Մասնավորապես, ծրագրերի համակարգող Դանիել Իռանխիսյանը, որպես հրավիրյալ փորձագետ, ելույթ է ունեցել ԵԱՏՄ-ին Հայաստանի անդամակցության մասին Ազգային ժողովի լսումներին:

Իսկ մոնիտորինգի բաժնի ղեկավար Աննա Փամբուխյանը ելույթով հանդես է եկել ԵՄ-Հայաստան շրջանակային համաձայնագրի վերաբերյալ լսումներին:



Փաստերի ստուգում sut.am կայքով

2017 թվականին ճանաչում ստացավ մեր հիմնադրած SUT.am փաստերի ստուգման կայքը: 2017 թվականի ընթացքում կայքում եղել է 205 հրապարակում: Կայքի գործունեության նպատակը ոչ միայն հակաժողովրդավարական քարոզչությունը հերքելն է, այլև այդ քարոզչության անուղղակի դրսևորումների դեմ պայքարելը ու կոռուպցիոն սխեմաների բացահայտումը:

SUT.am-ն իրականացրել է ոչ միայն փաստերի ստուգում՝ ֆակտ-չեքինգ, այլև բազում լրագրողական հետաքննություններ: Ստուգվել են պաշտոնյաների հայտարարած բազմաթիվ փաստեր և կուսակցությունների նախընտրական խոստումներ: Բացահայտվել են դպրոցների ու մանկապարտեզների տնօրենների կողմից ընտրությունների ժամանակ քաղաքական կոռուպցիայի ներգրավման դեպքեր:



SUT.am-ը դարձել է ճանաչում ունեցող և ազդեցիկ լրատվամիջոց, որի յուրաքանչյուր հրապարակումն ունի միջինում 9800 դիտում: Տարվա ընթացքում դիտումների ընդհանուր քանակը մոտ 2 միլիոն է:

Ռուսալեզու լրատվական կայք՝ armrus.info

2016 թվականին մենք հիմնեցինք մեր ռուսալեզու լրատվական armrus.info կայքը: Այն արդեն դարձել է լիարժեք գործարկվող լրատվական կայք:



Վերոնշյալ շրջանում ավելի քան 3000 հոդված է հրապարակվել կայքում: Կայքն օբյեկտիվորեն լուսաբանել է ընթացիկ լուրերը՝ Հայաստանի ռուսախոս ընթերցողների համար, ինչպես նաև հայաստանյան կարևոր զարգացումները՝ օտարերկրյա ընթերցողների համար:

ՄԱՄՈՒԼԸ ՄԵՐ ՄԱՍԻՆ

Դանիել Իոաննիսյանը, Անդրանիկ Մանուկյանը և Աննա Փամբուխյանը տեղական և օտարերկրյա առաջատար լրատվամիջոցներին հարյուրավոր հարցազրույցներ են տվել՝ ընտրությունների, քաղաքականության, տնտեսության և այլ ոլորտների առանցքային հարցերի մասին:

'Some district leaders supported the activities of the "helpers":' Daniel Ioannisyan



During the interview with Aravot.am the spokesmen of "Independent Observer" public initiative Daniel Ioannisyan mentioned that in many polling stations there are fake observers, who have fake certificates, but are not signed in Central Election Commission: "It's quite a gross violation when the candidate is at the polling station. I think so. And

Беларусь всегда выбирает Азербайджан: специалист по международным отношениям (video)

21:41 | January 25, 2017 | Интервью

Share 10



Жалобу задержанного в Беларуси Александра Лапшина городской суд Минска рассмотрит уже завтра – 26 января. Интересы Лапшина представят российские и израильские адвокаты. Если суд не удовлетворит апелляцию Лапшина, последний может обратиться в Верховный суд Беларуси. Для более подробной беседы на эту тему "A1+" пригласил эксперт

по Международным отношениям Анну Памбухчян.



Эхо Кавказа

НОВОСТИ

Сентябрь 14, 2017

НПО раскритиковало власти Армении за закрытие выставки о жертвах репрессий

Expert: No political will, no debates (video)

19:36 | May 5, 2017 | Interview

Share 0



Political forces competing with each other do not hold debates. Many spoke about it during the April parliamentary elections saying that we lack the culture of televised debates.

A1+ Company has talked on the theme to an international relations expert Anna Pambukhchyan.



ГЛАВНАЯ НОВОСТИ ПОЛИТИКА ОБЩЕСТВО ЭКОНОМИКА РЕГИОН НАКАБАХ КУЛЬТУРА СПОРТ АРХИВ

АРМЕНИЯ
Февраль 28, 2017
Нана Саван

В соглашении Армения-ЕС либерализация визового режима «сформулирована как долгосрочная цель»

Поделись



...

Смотрите комментарии

Print



ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

2017 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՆ՝ ԸՍՏ ԴՈՆՈՐՆԵՐԻ

Ժողովրդավարության եվրոպական հիմնադրամ, Բրյուսել	€ 26,100
Բաց հասարակություններ հիմնադրամ – Հայաստան, Երևան	20,281,237 դր
Ժողովրդավարության ազգային հիմնադրամ, Վաշինգտոն	\$ 64,989
Պրահայի քաղաքացիական հասարակության կենտրոն, Պրահա	€ 10,468
Ընդհանուր ֆինանսական միջոցներ	\$ 148,327 (մոտ.)

2017 ԾԱԽՍԵՐՆ՝ ԸՍՏ ԻՐԱԿԱՆԱՅՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ

Քաղաքացիների իրավունքների մասին հանրային իրազեկվածության բարձրացում	11,888,658 դր
ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գործունեության մշտադիտարկում	6,504,152 դր
Հայաստանում պրոպագանդայի և ապատեղեկատվության օբյեկտիվ ընկալման ձևավորում և դրանց ազդեցության նվազեցում	13,258,811 դր
Արտաքին քաղաքականության շուրջ հանրային քննարկումներ	29,921,880 դր
Փաստերի ստուգման լրագրության զարգացումը Հայաստանում	5,750,451 դր
Ընդհանուր ծախսեր	67,323,952 դր կամ \$ 139,474 (մոտ.)